

## ՄԱՍՈՒԽԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Թեղուտի պաշտպանության շարժումը բողոքարկում է Թեղուտի հանքավայրի շահագործման դեմ ուղղված հայցադիմումի ընդունման մերժումը ՀՀ վարչական դատարանում**

**ք. Երևան, 23 հուլիսի 2009թ.** - Ս. թ. հուլիսի 8-ին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» և «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունները հայցադիմում էին ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և երրորդ անձ՝ «Արմենիա Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության՝ խնդրելով.

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի կարգով՝
  - **Ճանաչել ուժը կորցրած** 2001 թվականի փետրվարի 8-ին «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությանը տրված՝ Թեղուտի հանքի շահագործման թիվ ՀՎ-ՄՇ-13/33 լիցենզիան:
- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի կարգով՝
  - **Ճանաչել** ՀՀ բնապահպանության նախարարի կողմից 03.04.2006 թվականին հաստատված՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական թիվ ԲՓ-31 դրական եզրակացության առ ոչինչ լինելը:
  - **Ճանաչել** ՀՀ բնապահպանության նախարարի կողմից 07.11.2006 թվականին հաստատված՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական թիվ ԲՓ-135 դրական եզրակացության առ ոչինչ լինելը:
  - **Ճանաչել** «Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու և հողամասեր տրամադրելու մասին» ՀՀ Կառավարության 01.11.2007 թվականի թիվ 1278-Ն որոշման առ ոչինչ լինելը:
- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի կարգով՝
  - **Ճանաչել անվավեր** 23.03.2004 թվականին «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությանը տրված՝ Թեղուտի պղնձ-մոլիբդենային հանքավայրի հանքարդյունահանման թիվ ՀՎ-Լ-14/90 հատուկ լիցենզիան: Որպես հետևանք, ճանաչել անվավեր «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության՝ մի կողմից և մյուս կողմից՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ու ՀՀ բնապահպանության նախարարության միջև 08.10.2007 թվականին կնքված թիվ 316 «Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման լիցենզային պայմանագիր»-ը:
  - **Ճանաչել անվավեր** 2005 թվականի դեկտեմբերի 29-ին «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությանը տրված՝ Ընդերքի օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության թիվ 21 հատուկ լիցենզիան: Որպես հետևանք, ճանաչել անվավեր 2006 թվականի մայիսի 4-ին ՀՀ բնապահպանության նախարարության և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ միջև կնքված՝ «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության» թիվ 140 լիցենզային պայմանագիրը:
  - **Ճանաչել անվավեր** Թեղուտի հանքավայրի զարգացման ծրագրի աջակցման աշխատանքները համակարգող միջգերատեսչական

հանձնաժողովի 30.09.2005 թվականի նիստում ընդունված՝ Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի հայեցակարգը:

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝
  - **Պարտավորեցնել** պատասխանողներին՝ արգելել «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությանը Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրով նախատեսված գործունեության իրականացումը:

Հայցապահանջի հիմքում ընկած իրավախախտումները ներառում են հետևյալը.

- ՀՀ **Սահմանադրության** 1-ին հոդվածը, 6-րդ հոդվածի 4-րդ մասը, 10-րդ հոդվածը, 33.2-րդ հոդվածը.
- ՀՀ **միջազգային պայմանագրեր, այդ թվում՝**
  - «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիան (Օրիուսի կոնվենցիա),
  - «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիան,
- ՀՀ **հողային օրենսգրքի** 46-րդ հոդվածը, 48-րդ հոդվածը, 48.1 հոդվածը, 76-րդ հոդվածը, 98-րդ հոդվածը.
- ՀՀ **ջրային օրենսգրքի** 103-րդ հոդվածը.
- ՀՀ **ընդերքի մասին օրենսգրքի** 11-րդ հոդվածը, 28-րդ հոդվածը, 40-րդ հոդվածը.
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ **օրենքի** 2-րդ հոդվածը, 3-րդ հոդվածը, 5-րդ հոդվածը, 9-րդ հոդվածը, 10-րդ հոդվածը, 11-րդ հոդվածը, 14-րդ հոդվածը, 15-րդ հոդվածը.
- «**Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման տրամադրելու (կոնցեսիայի) մասին**» ՀՀ **օրենքի** (այսուհետ նաև՝ «կոնցեսիայի մասին» ՀՀ օրենք) 13-րդ հոդվածը, 14-րդ հոդվածը, 59-րդ հոդվածը, 60-րդ հոդվածը, 76-րդ հոդվածը.
- «**Բուսական աշխարհի մասին**» ՀՀ **օրենքի** 17-րդ հոդվածը.
- «**Կենդանական աշխարհի մասին**» ՀՀ **օրենքի** 18-րդ հոդվածը:

Ս.թ. հուլիսի 9-ին Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը (դատավոր՝ Արծրուն Միրզոյան) կայացրել է որոշում հայցադիմումի ընդունումը մերժելու մասին՝ պատճառաբանելով, թե հայցվոր հասարակական կազմակերպություններն իրավասու չեն վիճարկել նշված խնդիրները:

Ս.թ. հուլիսի 21-ին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունները բողոքարկել են հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը Հայաստանի Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում՝ հիմք ընդունելով այն, որ Օրիուսի կոնվենցիայի իմաստով հայցվոր կազմակերպությունները հանդիսանում են «շահագրգիռ հասարակություն», ինչը հաստատվում է նաև Օրիուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի կողմից Դալմայի այգիների կառուցապատման հարցով 2006թ. մարտին կազմված եզրակացությունների և առաջարկությունների փաստաթղթում:

Հայցվոր կազմակերպությունների շահերը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում ներկայացնում է փաստաբան Հայկ Ալունյանը:

*Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Սոնա Այվազյանին 093433278 հեռախոսահամարով:*